

ՀՀ Արմավիրի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի նիստ

ՕՐԱԿԱՐԳ

04.02.2015թ.

12⁰⁰ Նիստի մեկնարկ: Բացման խոսք՝ մարզպետ, խորհրդի նախագահ
Ա. Ղահրամանյան:

12¹⁵ Օրակարգի ներկայացում և հաստատում:

12³⁰ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված՝ ՀՀ
Արմավիրի մարզում նախատեսվող միջոցառումների ծրագրի
քննարկում:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի նիստի

04.02.2015թ.

ք. Արմավիր

Նիստը վարում էր ՀՀ Արմավիրի մարզպետ, Արմավիրի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նախագահ Ա. Ղահրամանյանը, նիստին ներկա էին խորհրդի 20 անդամներից 15-ը, ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի երիտասարդության հարցերը համակարգող Ա. Առաքելյանը, ՋԼՄ ներկայացուցիչներ:

Օրակարգում ընդգրկված էր մեկ հարց՝

1. Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված՝ ՀՀ Արմավիրի մարզում նախատեսվող միջոցառումների ծրագրի քննարկում:

Խորհրդի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը և առաջարկեց հաստատել այն: Որից հետո ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի երիտասարդության հարցերը համակարգող Ա. Առաքելյանը ներկայացրեց Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված՝ ՀՀ Արմավիրի մարզում նախատեսվող միջոցառումների ծրագիրը:

Ծրագիրն արժանացավ նիստին ներկա գտնվող Խորհրդի անդամների հավանությանը:

Սարդարապատի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար Գեղամ Մխիթարյանը իր և խորհրդի մյուս անդամների անունից հանդես գալով պատրաստակամություն հայտնեց աջակցել ներկայացված ծրագրի իրականացմանը:

Խորհրդի նախագահ՝

Ա. Ղահրամանյան

Խորհրդի քարտուղար՝

Ա Ավետիսյան